

3257

Գրականության պետական թիվային գրադարձ, մասնակի

հ. ԱՍԱԼԻՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԵՐՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

31<33

4-97

ԿՈՒՍԱԿՑՈՒՄ
1933 ՅԵՐԵՎԱՆ

21 JUN 200

Պրելեսարներ բոլոր յերկրների, միացել

3K33
Կ-97

ՄԿ

հ. ԱՍԱԼԻՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՌԿ(Բ)Կ 10-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(8-16 ՄԱՐՏԻ 1921 թ.)

ԿՈՒՍԿԱՏ

1933 ՅԵՐԵՎԱՆ



ԶԵԿՈՒՅՈՒՄ ՌԿ(Բ)Կ 10-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	b2
Զեկույցում ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարին	3
Յեղափակման խոսք	13
ՌԿ (բ)Կ 10-րդ համագումարի բանաձևը	17



781
41

Սախքան ազգային հարցի վերաբերյալ
կուսակցության հերթական կոնկրետ խըն-
դիրներին անմիջականորեն անցնելը, անհրաժեշտ և սահմանել
միքանի նախադրյալներ, առանց վորոնց անկարելի յե լուծել
ազգային հարցը: Այդ նախադրյալները վերաբերում են ազգերի
ծագման հարցին, ազգային ճնշման սաղմանավորությանը, ազգային
ճնշման ձևերին՝ պատմության զարգացման ընթացքում և ապա
ազգային հարցի լուծման ձևերին՝ զարգացման տարրեր շրջան-
ներում:

Այդպիսի յերեք շրջան կա:

Առաջին շրջանը Արևմուտքում Քեռդալիզմի վերացման և կա-
պիտալիզմի հաղթանակի շրջանն ե: Մարդկանցից ազգություն-
ներ կազմվելը վերաբերում ե այդ շրջանին: Յես նկատի ունեմ այն-
պիսի յերկրներ, ինչպես Անգլիան ե (առանց Իոլանդիայի), Ֆրան-
սիան, Իտալիան: Արևմուտքում—Անգլիայում, Ֆրանսիայում, Իտա-
լիայում և մասամբ Գերմանիայում—Փեռդալիզմի վերացման և մարդ-
կանցից ազգություններ կազմվելու շրջանը ըստ ժամանակի ընդ-
հանուր առմամբ զուգադիպում ե կենտրոնացած պետությունների
յերեան գալու շրջանին, վորի պատճառով ազգություններն այն-
տեղ իրենց զարգացման ընթացքում պետական ձևեր ելին ընդու-
նում: Յեվ ինչ չափով վոր այդ պետությունների ներսում չկա-
յին ուրիշ փոքրիշատե աչքի ընկնող ազգային խմբավորումներ,
այն չափով ել այնտեղ չկար և ազգային ճնշում: Յեվրոպայի
արեելքում, ընդհակառակն, ազգությունների կազմակերպման և
Քեռդալական ցրվածության վերացման պրոցեսն ըստ ժամանակի
չզուգադիպեց կենտրոնացած պետությունների գոյացման պրո-
ցեսին: Յես նկատի ունեմ Հունգարիան, Ավստրիան, Ռուսաս-
տանը: Այդ յերկրներում կապիտալիստական զարգացում դեռ

Հկար, այն թերեւս նոր եր՝ սաղմնավորվում, մինչդեռ թյուրքերի, մոնղոլների և Սրբելքի մյուս ժողովուրդների արշավանքներից պաշտպանվելու շահերը պահանջում եյին անհապաղ կազմել կենտրոնացած պետություններ, վորոնք ընդունակ լինեյին դիմադրելու այդ արշավանքների գրոհին։ Յեվ վորովհետև Յեվուալայի արևելքում՝ կենտրոնացած պետությունների յերեան գալու պրոցեսն ավելի արագ եր ընթանում, քան մարդկանցից ազգություններ կազմվելու պրոցեսը, ուստի և այստեղ կազմվում են խառը պետություններ՝ բաղկացած միքանի ժողովուրդներից, վորոնք գեռես իրեւ ազգություններ չեյին կազմակերպվել, սակայն արդեն միավորված եյին ընդհանուր պետության մեջ։

Այսպիսով առաջին շրջանը բնորոշվում է ազգությունների յերեան գալով՝ կապիտալիզմի արշալույսին, ընդ վորում Յեվուալայի արևմուտքում սաղմնավորվում են զուա ազգային պետություններ՝ ազգային ճնշումից զերծ, իսկ արևելքում սաղմնավորվում են բազմազգի պետություններ, վորի գլուխ կանգնած և մեկ, ավելի զարգացած ազգություն, իսկ մյուս, ավելի սակավ զարգացած ազգությունները քաղաքականապես, իսկ հետո նաև տնտեսապես հապատակվում են գերիշխող ազգության։ Արևելքի այդ բազմազգի պետությունները որբան հանդիսացան ազգային այն ճնշման, զորն առաջ բերեց ազգային ընդհարումներ, ազգային շարժումներ, ազգային հարցը և այդ հարցի լուծման տարբեր միջոցները։

Ազգային ճնշման և դրա դեմ պայքարելու միջոցների զարգացման յերկրորդ շրջանը զուգադիպում է իմպերիալիզմի յերեան գալու շրջանին, յերբ կապիտալիզմը վաճառահանության, հումքի, վառելանյութի և բանվորական եժան ուժի շուկաներ փնտռելիս, կապիտալի արտահանության և յերկաթուղային ու ծովային մեծ ճանապարհների ապահովման համար պայքարելիս զուրս և ցատկում ազգային պետության շրջանակներից և իր տերիտորիան լայնացնում ե մոտավոր ու հեռավոր հարեանների հաշվին։ Այս յերկրորդ շրջանում Արևմուտքի հին ազգային պետությունները — Անգլիան, Իտալիան և Ֆրանսիան — դադարում են ազգային պետություններ լինելուց, այսինքն, նրանք նոր տերիտորիաներ գրավելու շնորհիվ դառնում են բազմազգի, գաղութատիրական պետություններ, դրանով իսկ ասպարեզ հանդիսանալով ազգային և գաղութային այն ճնշման, վոր առաջ արդեն գոյություն ու-

ներ Յեվրոպայի արևելքում։ Յեվրոպայի արևելքում այդ շրջանը բնորոշվում է հպատակ ազգերի (չեխերի, լեհերի, ուկրաինցիների) արթնացումով և ուժեղացումով, վոր խմբերի լիատական պատերազմի հետևանքով հանգում և հին բուրժուական բազմազգի պետությունների քայլայման և, այսպես կոչված, մեծ պետություններին ստրուկ զարձած նոր ազգային պետությունների գոյացման։

Յերրորդ շրջանը խորհրդային շրջանն է, կապիտալիզմի վերացման և ազգային ճնշման լիկիդացիայի շրջանը, յերբ գերիշխող ու հպատակ ազգերի հարցը, զաղութների և մետրոպոլիայի հարցը պատմության արխիվը և անցնում, յերբ մեր առջև ՌՍՖՀՆ տերիտորիայի վրա վտաքի յեն կանգնում հավասար իրավունքներ և զարգանալու հավասար հնարավորություն ունեցող ազգությունների վորոնք սակայն պահպանել են պատմականորեն ժառանգած վորոշ անհավասարություն՝ իրենց տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացության պատճառով։ Ազգությունների այս անհավասարության ելությունն այն ե, վոր մենք պատմական զարգացման հետևանքով անցյալից ստացել ենք մի ժառանգություն, ըստ վորի մի ազգություն, այն ե՝ վելիկոուսականը, քաղաքական և արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած հանդիսացավ, քան մյուս ազգությունները։ Այստեղից ծագում է փաստացի անհավասարություն, վորը չի կարող վերացվել մի տարվա ընթացքում, բայց վորը պետք ե անպայման վերացվի՝ հետամնաց ազգություններին անտեսական, քաղաքական և կուլտուրական ողնություն ցույց տալու միջոցով։

Ահա ազգային հարցի զարգացման այն յերեք շրջանները, վորոնք պատմականորեն անցան մեր առաջից։ Առաջին յերկու շրջանը մի ընդհանուր հատկանիշ ունեն։ Այդ այն ե, վոր յերկու շրջանում ել ազգությունները ճնշման և ստրկացման են յենթարկում, վորի պատճառով ազգային պայքարը իր ուժի մեջ և մնում, իսկ ազգային հարցը մնում է չլուծված։ Սակայն նըանց մեջ կա նաև տարբերություն։ Այդ այն ե, վոր առաջին շրջանում ազգային հարցը դուրս չի գալիս առանձին բազմազգի պետությունների շրջանակից և ընդգրկում ե լոկ միքանի, գլխավորապես յեվրոպական ազգություններ, մինչդեռ յերկրորդ շրջանում ազգային հարցը ներպետական հարցից գառնում է միջպետական

հարց, անիբավագոր ազգություններին իրենց հպատակ պահելու և Յեկուպայից դուրս նորանոր ազգերի ու ցեղերի իրենց ազգեցության յենթարկելու համար իմակերխալիստական պետությունների միմյանց դեմ պատերազմելու հարցը։ Այսպիսով, ազգային հարցը, վոր առաջ նշանակություն ուներ միայն կուլտուրական յերկրներում, այս շրջանում կորցնում է իր մեկուսացած բնույթը և ձուլվում ե գաղությունների ընդհանուր հարցի հետ։

Ազգային հարցի փոխարկումն ընդհանուր՝ գաղութային հարցի պատմական պատահականություն չե։ Այս փոխարկումը բացարձում ե նախ նրանով, վոր իմակերխալիստական պատերազմի ժամանակ հենց պատերազմող պետությունների իմակերխալիստական խմբավորումները հարկադրված ելին դիմելու գաղություններին, վորտեղից նրանք մարդկային ուժ ելին քաղում, վորից և կազմակերպում ելին իրենց դորքերը։ Անկասկած ե, վոր այդ պրոցեսը, իմակերխալիստների կողմից գաղությունների հետահնաց ժողովուրդներին անխուսափելիրեն դիմելու պրոցեսը չեր կարող չզարթեցնել այդ ցեղերն ու ժողովուրդները պատասխարվելու, պայքարելու համար։ Այսուհետեւ, յերկրադր ֆակտորը, վոր նպաստել ե ազգային հարցի լայնանալուն և ընդհանուր գաղութային, ամբողջ յերկրագունդն ընդգրկող հարց գառնալուն՝ նախ պատագրական շարժման կայծերով և ապա բոցերով, այդ՝ Թյուրքիան բաժանելու և նրա պետական գոյությանը վերջ դնելու փորձն և իմակերխալիստական խմբավորումների կողմից։ Թյուրքիան, վոր մահմելական ազգերի մեջ պետական տեսակետից ամենազարգացած յերկիրն ե, այդ Թյուրքիան չեր կարող հաշվել այդ տեսակ հեռանկարների հետ։ Նա կոմի գրող պարզեց և իր շուրջը խմբեց Արևելքի ժողովուրդներին՝ ընդդեմ իմակերխալիզմի։ Յերրորդ ֆակտորը Խորհրդային Ռուսաստանի հանգես գալն ե, վորի պայքարն ընդդեմ համաշխարհային իմակերխալիզմի մի շարք հաշողություններ ունեցավ և բնականարար վոգերեց Արևելքի ձնշված ժողովուրդներին, արթնացրեց նրանց, վոտքի հանեց պայքարելու և դրանով իսկ հնարավորություն տվեց ստեղծելու ձնշված ազգությունների մի ընդհանուր ճակատ՝ իոլանդիայից մինչև Հնդկաստան։

Ահա այն բոլոր ֆակտորները, վորոնք ազգային ձնշման յերկրորդ ստադիայում հասցըին այն հետևանքին, վոր բուրժուական հաստակությունը վոչ միայն չլուծեց ազգային հարցը, վոչ միայն

խաղաղություն չհաստատեց ժողովուրդների միջև, այլ, ընդհակառակն, ազգային պայքարի կայծը բորբոքեց ու դարձրեց գաղությունների և կրտագաղությունների ձնշված ազգերի պայքարի բոց՝ ընդդեմ համաշխարհային իմակերխալիզմի։

Սկսերկ ե, վոր ազգային հարցը լուծելու ընդունակ միակ ոեժիմը, այսինքն, այն ոեժիմը, վոր ընդունակ ե ստեղծելու պայմանները վորոնք ապահովեն զանազան ժողովուրդների և ցեղերի յեղբայրական աշխատակցությունն ու խաղաղ շինարարությունը, այդ՝ Խորհրդային իշխանության ոեժիմն ե, պրոլետարիատի զիկտատուրայի ոեժիմը։

Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, վոր կապիտալի տիրապետության, արտադրության միջոցների մասնավոր սեփականատիրության և դասակարգերի գոյության ժամանակ անկարելի յե ապահովել ազգությունների հավասարությունը, վոր քանի գոյություն ունի կապիտալի իշխանությունը, քանի դեռ կորի ե մղվում արտադրության միջոցներին տիրանալու համար, աղությունների վոչ մի հավասարություն չի կարող լինել, ինչպես և չի կարող լինել ազգերի աշխատավոր մասսաների փոխադրձ աշխատակցություն։ Պատմությունն ասում ե, վոր ազգային անհավասարության վերացման միակ միջոցը, ձնշված և կիսամնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների յեղբայրական աշխատակցության ոեժիմը հաստատելու միակ միջոցը՝ այդ կապիտալիզմի վերացումն ե և խորհրդային կազերի հաստատումը։

Այսուհետեւ, պատմությունը ցույց ե տվել, վոր քանի վոր առանձին ժողովուրդների հաջողվում ե ազատագրվել իրենց, ինչպես նաև «ոտար» բուրժուազիայից, այսինքն, քանի վոր նրանք իրենց մոտ խորհրդային կարգեր են հաստատում, նրանք հնարավորություն չունեն իմակերխալիզմի որոք առանձին գոյություն ունենալու և հաջողությամբ պաշտպանելու իրենց գոյությունն առանց հարեւան խորհրդային հանրապետությունների կողմից տնտեսական և ուղմական ոգնություն ստանալու։ Հունակարիայի սրինակը փայլուն ապացուց ե, վոր առանց խորհրդային հանրապետությունների պետական միության, առանց նրանց միաձուրման վորպես մի ռազմատնտեսական ուժի, անհնարին ե դիմադրել համաշխարհային իմակերխալիզմի միացյալ ուժերին՝ վոչ ուղմական և վոչ ել տնտեսական ճակատներում։

Խորհրդային հանրապետությունների ֆեդերացիան պետական միության այն վորոնելի ձևն ե, վորի կենտանի մարմացումն ե ՌՍՖՀ:

Ահա, ընկերներ, այն նախագրյալները, վորոնց մասին յես սկզբում ուղղում եյի խոսել այստեղ նրա համար, վորակսղի հետո հիմնավորեմ մեր կուսակցության վորոշ քայլերի անհրաժեշտությունը, ազգային հարցի լուծման գործում ՌՍՖՀ շրջանակներում:

Թեև խորհրդային ռեժիմի ժամանակ Ռուսաստանում և Ռուսաստանի հետ կապված հանրապետությունների մեջ չկան այլեւ վհչ գերիշխող և վհչ ել իրավագուրք ազգություններ, վհչ մետրոպոլիա, վհչ գաղութներ, վհչ շահագործողներ և վհչ ել շահագործվողներ, այնուամենայնիվ ազգային հարցը Ռուսաստանում գոյություն ունի: ՌՍՖՀ մեջ ազգային հարցի եյությունն այն ե, վոր վերացվի ազգությունների այն հետամնացությունը (տնտեսական, քաղաքական և կուլտուրական), վոր մենք ժառանգել ենք անցյալից, վորպեսզի հնարավորություն տրվի հետամնաց ժողովուրդներին հասնելու կենտրոնական Ռուսաստանին թե պետական, թե կուլտուրական և թե տնտեսական տեսակետից: Հին ռեժիմի ժամանակ ցարական իշխանությունը չեր ջանում է չեր կարսղ ջանար պետականություն զարգացնելու Ռւկրախնայում, Աղրբեջանում, Թուրքեստանում և ուրիշ ծայրամասերում. նա ծայրամասերում պետականության զարգացման դիմ պայքարում եր այնպես, ինչպես նրանց կուլտուրական զարգացման դեմ, ձգտելով բռնությամբ ասսիմիլացիայի յենթարկելու տեղական բնակչությունը: Այնուհետև, հին պետությունը, կալվածատերերն ու կապիտալիստները մեզ ժառանգություն են թողել այնպես ծեծկված ժողովուրդներ, ինչպես, որինակ՝ կիրգիզները, չեչենները, ոսերը, վորոնց հողերը գաղութացման վայրեր եյին Ռուսաստանի կազակների և կուլակային տարրերի բնակեցման համար: Այդ ժողովուրդները դատապարտված եյին անասելի տանջանքների ու մահացման: Այնուհետև վելիկոուս ազգության դրությունը, վոր գերիշխող ազգություն եր կազմում, իր ազդեցության հետքերն ե թողել նույնիսկ ուռւ կոմունիստների վրա, վորոնք անկարող են կամ չեն ցանկանում ավելի մերս մոտենալ մյուս ազգությունների մասսաներին, հասկանալ նրանց կարիքը և ողնել նրանց դուրս գալու հետամնացությունից և անկուլտուրականությունից: Յեւ

խոսում եմ ոռւս կոմունիստների այն սակավաթիվ խմբերի մասին, վորոնք իրենց աշխատանքի մեջ անտես առնելով կենցաղի և ծայրամասերի կուլտուրայի առանձնահատկությունները, յերբեմն թեքվում են դեպի ոռւսական մեծապետական շովինիզմը: Այնուհետև, ազգային ճնշում կրած վոչ-ոռւս ազգությունների դրությունը նույնպես իր ազդեցությունն ե թողել վոչ-ոռւս կոմունիստների վրա, վորոնք յերբեմն չեն կարողանում տարբերել իրենց ժողովրդի աշխատավոր մասսաների դասակարգային շահերը, այսպես կոչված, «համաժողովրդական» շահերից: Խոսքս այն թեքման մասին ե դեպի տեղական նացիոնալիզմը, վորը յերբեմն նկատվում ե բնիկ կոմունիստների շարքերում և վորն Արևելքում արտահայտվում ե պանիլամիզմի և պանթյուրքիզմի մեջ: Վերջապես անհրաժեշտ ե կիրգիզներին, բաշկիրներին և միքանի լեռնական ցեղերի փրկել մահացուաից՝ ապահովել նրանց անհրաժեշտ հողովի ի հաշիվ կուլակ-կոլոնիզատորների: Այս ե ահա այն ժառանգության վոչ լրիվ ցանկը, վոր ստացել ենք մենք անցյալից և վորն անպայման պետք ե վերացվի:

Բնորոշելով կուսակցության այս հերթական խնդիրները, յես կցանկանայի անցնել ընդհանուր խնդրին՝ ծայրամասերում մեր կոմունիստական քաղաքականության հարմարեցմանը տնտեսական կացության այն հատուկ պայմաններին, վոր գոյություն ունեն զիսավորապես Արևելքում:

Բանն այն, ե վոր մի շարք զիսավորապես թուրքական ժողովուրդներ—դրանք մոտավորապես 30 միլիոն են—չեն անցել ժամանակ չեն ունեցել անցնելու արդյունաբերական կապիտալիզմի շրջանը, ուստի և չունեն կամ համարյա թե չունեն արդյունաբերական պլոտետարիատ, վորի պատճառով նրանք ստիպված են տնտեսության նախնական ձևերից անցնելու խորհրդային տնտեսության ստաղիային, զանց առնելով արդյունաբերական կապիտալիզմը: Այս դժվար, սակայն բնավ վոչ-անհնարին գործողությունը կատարելու համար անհրաժեշտ ե հաշվի առնել այդ ժողովուրդների տնտեսական դրության, նույնիսկ պատմական անցյալի, կենցաղի և կուլտուրայի բոլոր առանձնահատկությունները: Այդ ժողովուրդների տերիտորիայի վրա պատվաստել այն միջոցառությունը, վորոնք ուժ և նշանակություն ունեյին՝ այս առեղ, Ռուսաստանի կենտրոնում—անմիտ բան ե և վտանգավոր: Պարզ ե, վոր ՌՍՖՀ մեջ տնտեսական քաղաքականությունը կիրա-

ուելիս անպայման պետք ե ուշադրություն դարձնել տնտեսական գրության, դասակարգային ստրուկտուտուրայի, պատմական անցյալի այն բոլոր առանձնահատկությունների վրա, վոր մենք գտնում ենք ծայրամասերում։ Յես դեռ չեմ խոսում այնպիսի անհեթեթությունների վերացման մասին, ինչպես, որինակ՝ Պարժողականացման մասին, վորով մասնատրաման կարգով խողեր պետք ե տա Կիրգիզիան, ուր մահմեղական բնակչությունը խողեր յերբեք չի ունեցել։ Այս որինակից յերևում ե, թե վոր աստիճան չեն ցանկանում հաշվի առնել կենցաղի առանձնահատկությունները, վորոնց նկատում և առաջին իսկ ճանապարհորդը։

Հենց այժմ ինձ մի տոսմ տվին, վորով ինդրում են պատասխան տալ ընկ. Զիշերինի հոդվածներին։ Ընկերներ, իմ կարծիքով Զիշերինի հոդվածները, վոր յես ուշադրությամբ կարգացի, բացի լիտերատուրացինայից ուրիշ վոչինչ չեն ներկայացնում։ Այստեղ կա չորս սխալ, կամ թյուրիմացություն։ Նախ, ընկ. Զիշերինը հակումն ունի ժխտելու իմպերիալիստական պետությունների հակասությունները, գերազնահատելով իմպերիալիստաների ինտերնացիոնալ միավորումը և աչքաթող անելով, թերագնահատելով իմպերիալիստական խմբավորումների և պետությունների այն ներքին հակասությունները, վորոնք գոյություն ունեն նրանց միջև և յերբեմն պատերազմ են առաջ բերում (Ֆրանսիա, Ամերիկա, Անգլիա, Ճապոնիա և այլն)։ Նա գերազնահատել է իմպերիալիստական վերնախավերի միավորման մոմենտը և թերագնահատել այն հակասությունները, վոր գոյություն ունեն այդ արեստի ներսում։ Մինչդեռ այդ հակասությունները կան և նրանց վրա յե խարսխվում Արտգործժողկոմատի գործունեյությունը։ Այսուհետև ընկ. Զիշերինը յերկորդ սխալն ե գործում։ Նա թերագնահատում է այն հակասությունները, վոր կան գերիշող մեծ պետությունների և վերջերս գոյացած ազգային պետությունների միջև (Զեխո-Սլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա և այլն), վորոնք ֆինանսական ռազմական կախումն ունեն այդ մեծ պետություններից։ Ընկ. Զիշերինը բոլորովին աչքաթող ե արել, վոր չնայած այդ ազգային պետությունների կախմանը մեծ պետություններից կամ, ավելի ճիշտ՝ շնորհիվ այդպիսի կախման, մեծ պետությունների և նրանց միջև կան հակասություններ, վորոնք յերևան յեկան, որինակ, Լեհաստանի, Եստոնիայի և ուրիշների հետ բանակցելիս։ Արտգործժողկոմատի գոյության

իմաստը հենց այն ե, վոր այդ բոլոր հակասությունները հաշվի առնի, նրանց վրա հիմնվի և հարմարվելով դրանց, գործի այդ հակասությունների սահմաններում։ Զարմանալի կերպով ընկ. Զիշերինը թերագնահատել ե այդ մոմենտը։ Ընկ. Զիշերինի յերրորդ սխալն այն ե, վոր նա չափազանց շատ ե խոսում ազգային ինքնորոշման մասին, վորն իրոք դատարկ լոգունգ ե դարձել և այդ հեշտությամբ ոգտագործում են իմպերիալիստաները։ Ընկ. Զիշերինը տարօրինակ կերպով մռացնել ե, վոր մենք արդեն 2 տարի յե, ինչ հրաժեշտ ենք տվել այդ լոգունգին։ Մեր ծրագրում այդ լոգունգն այլև չկա։ Մեր ծրագրում խոսվում է վոչ թե ազգային ինքնորոշման մասին, վոր բոլորովին ճապաղ մի լոգունգ ե, այլ ավելի բյուրեղացած ու պարզորոշ լոգունգի՝ ազգերի պետականորեն անջատվելու իրավունքի մասին։ Դրանք յերկու տարբեր բաներ են։ Ընկ. Զիշերինն իր հոդվածներում տարօրինակ կերպով հաշվի չի առնում այդ մոմենտը, վորի պատճառով նրա բոլոր առարկությունները ճապաղ դարձած լոգունգի անջատվելու իրավունքի բնույթ են կրում, վարովհետեւ վոչ յես իմ թեզիներում և վոչ ել կուսակցության ծրագիրը մի խոսքով անգամ չենք հիշատակում «ինքնորոշման» մասին։ Բայց այդ լոգունգը մեզ համար, զաղությներում բոնկող ազատագրական շարժման ավյալ մոմենտին հեղափոխական լոգունգ ե։ Ինչ չափով վոր խորհրդային պետությունները կամավոր սկզբունքով միանում են մի փետերացիայի մեջ, նույն չափով անջատման իրավունքը մնում է չոգտագործված հենց այն ազգերի կամքով, վոր մանում են ՌՄՖԽ մեջ։ Վորչափով մենք գործ ունենք արդեն այն գաղութների հետ, վորոնք գտնվում են Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Ճապոնիայի ճանկերում, վորչափով մենք գործ ունենք այնպիսի հպատակ յերկրների հետ, ինչպես՝ Արաբիան, Միջազգետքը, Թյուրքիան, Հնդկաստանը, այսինքն այն յերկրների հետ, վորոնք Անտանտի գաղութներն են, այդ չափով ազգերի անջատման իրավունքի լոգունգը հեղափոխական լոգունգ ե և հրաժարվել նրանից—նշանակում ե նպաստել Անտանտի շահերին։ Զորբորդ թյուրիմացությունը՝ գործնական ցուցումների բացակայությունն ե ընկ. Զիշերինի հոդվածներում։ Հողված գրելը, ինարկե, հեշտ ե, բայց վորպեսզի նրանց այսպիսի վերնագիր տաս, ինչպես՝ «Ընդդեմ ընկեր Ստալինի թեզիների», հարկավոր ե վորեւ լուրջ բան, գոնե գործնական հակասաջարկ

բերել: Մինչդեռ նրա հողվածներում յես չգտա մի զործնական առաջարկ, վորն արժանի լիներ ունկնդիելու:

Յես վերջացնում եմ, ընկերներ: Մենք հանգեցինք հետեւյալ յեղբակացություններին.—բուրժուական հանրապետությունը վոչ միայն անընդունակ հանդիսացավ ազգային հարցը լուծելու, այլև ընդհակառակը «լուծելու» իր փորձերով նա ազգային հարցը դարձրեց գաղութային հարց և իր գեմ ստեղծեց նոր ճակատ, վսրը ձգվում է Իռլանդիայից մինչև Հնդկաստան: Միակ պետությունը, վոր ընդունակ է դնելու և վճռելու ազգային հարցը, այդ այն պետությունն է, վոր հենված է արտադրության միշտցների և գործիքների կոլեկտիվ սեփականատիրության վրա, այդ խորհրդային պետությունն է: Խորհրդային ֆեներատիվ պետության մեջ չկան այլևս վոչ ճնշված ազգություններ, վոչ գերիշխողներ. ազգային ճնշումը վրչնչացված է, բայց հին բուրժուական կարգերից ժառանգած փաստական անհավասարության պատճառով (կուլտուրական, տնտեսական, քաղաքական), վոր գոյություն ունի ավելի կուլտուրական և սպական կուլտուրական ազգությունների միջև, ազգային հարցը ստանում է մի ձև, վոր պահանջում է մշակել այնպիսի միշտցներ, վորոնք կնպաստեն հետամիաց ազգերի աշխատավոր մասսաներին դյուրացնելու իրենց տնտեսական, քաղաքական և կուլտուրական բարգավաճումը, հնարավորություն կտան նրան համեմելու առաջ անցած կենտրոնական պրոլետարական Ռուսաստանին: Այստեղից ըըդամում են այն գործնական առաջարկները, վորոնք կազմում են ազգային հարցի վերաբերյալ իմ առաջարկած թեղիսների յերրորդ հատվածի բովանդակությունը: (Ծափական արություններ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Անկերներ, այս համագումարի համար աղքա-
յին հարցի վերաբերյալ դիսկուսիայում ամե-
նից բնուրոշն այն է, վոր մենք ազգային հարցի վերաբերյալ դեկլա-
րացիաներից Ռուսաստանի ադմինիստրատիվ վերաբաժնման մի-
ջոցով անցանք պըրակտիկ հարցադրման: Հոկտեմբերյան հեղափո-
խության սկզբում մենք սահմանափակվում ենք ժողովուրդների
անջատման իրավունքների դեկլարացիայով: 1918 և 1920 թվե-
րին մենք աշխատանք կատարեցինք Ռուսաստանի ադմինիստրատիվ
վերաբաժնման գծով ըստ ազգային հատկանիշի, հոգուտ հետամնաց
ժողովուրդների աշխատավոր մասսաների մերձնեցման Ռուսաստանի
պըրուետարիատի հետ: Իսկ այժմ մենք այս համագումարում հար-
ցը դնում ենք գուտ գործնական հողի վրա—թե ինչ պետք է լի-
նի կուսակցական քաղաքականությունն աշխատավոր մասսանե-
րի մանր-բուրժուական տարրերի նկատմամբ՝ Ռուսաստանի հետ
կապված ավտոռոմ շրջանների և անկախ հանրապետությունների
ներսում:

Աւատի ընկ. Զատոնսկու այն հայտարարությունը, թե ձեզ առաջարկված թեղիսները աբսորակտ բնույթ են կրում—ինձ զարդացրեց, յես ձեռքիս տակ ունեմ նրա սեփական թեղիսները, վորոնք նա, չգիտեմ ինչու, չառաջարկեց համագումարի ուշադրությանը, ուրբ (թեղիսներում) և վոչ մի գործնական առաջարկ յես չկարողացա գտնել, բառացի և վոչ մի առաջարկ, բացառությամբ, սակայն, վոր «ԾՄԾԽՀ» փոխարինվի «Արևելա-յեղվառպական» բառով, իսկ «Մուսատանյան» բառը՝ «Մուսական» կամ «Վելիկուուսական» բառով։ Ուրիշ գործնական առաջարկություններ այդ թեղիսներում յես չդժուար։

Այժմ յես անցնում եմ հետեւյալ հարցին: Վետք ու հայտառն,
վոր յես հանդես յեկող պատզամավորներից ավելին եյի սպասում:
Ծուսաստանում կա 22 ծայրամաս ընդ, վորում ծայրամասերից

միքանիսը արդյունաբերական տեսակետից խիստ զարգացած է՝ և արդյունաբերական առօսմով քիչ բանով են տարբերվում Ռուսաստանից, մյուսները դեռ չեն անցել կապիտալիզմի ստալինաց և հիմնովին տարբերվում են կենտրոնական Ռուսաստանի իրականությունից, մնացածները միանգամայն հետամնաց են: Թեղիսներում անհնար և ընդգրկել ծայրամասերի այս բոլոր տարակերպություններն իրենց կոնկրետ ձևերով: Զի կարելի պահանջել վոր ամբողջ կուսակցության համար նշանակություն ունեցող թեղիսները կրեյին միայն թուրքեստանյան բնույթ, միայն ազգբնանյան կամ միայն ուկրաինական բնույթ: Անհրաժեշտ ե բոլոր յերկրների համար ընդհանուր բնորոշ գծերը վերցնել և մտցնել թեղիսների մեջ, խուսափելով մասնակի գեպքերից: Թեղիսներ մշակելու ուրիշ մեթոդ գոյնություն չունի: Վոչ-վելիկոուսական ազգություններն անհրաժեշտ ե բաժանել միքանի խմբերի, վոր և արված ե թեղիսներում: Վոչ-ուսում ազգությունները կազմում են մոտ 65 միլիոն: Այս բոլոր վոչ-ուսում ազգությունների համար բնորոշ գիծն այն ե, վոր նրանք իրենց պետականության զարգացման խմասով հետ են մնացել կենտրոնական Ռուսաստանից: Մեր անելիքը պիտի լինի — ամեն չանք զործ դնել՝ ոչնելու այդ ազգություններին, նրանց պրոլետարական, նրանց աշխատավորական տարրերին, վորպեսզի նրանք իրենց մոտ զարգացնեն խորհրդային պետականություն մայրենի լեզվով: Այս ընդհանուր բանը նշված ե թեղիսներում՝ սրանց գործնական մասում: Այնուհետև, յեթե առաջ դնանք ծայրամասերի առանձնահատկությունների հետագա կոնկրետացման ճանապարհով, ապա պետք ե ընդհանուր գումարեց՝ մոտ 65 միլիոն վոչ-ուսում ազգություններից զատենք 30 միլիոն թուրքական ազգաբնակություն, վոր չի անցել կապիտալիզմ: Ընկ. Միկոյանը սխալվում է ասելով, թե Աղքարեկեղանը մի շարք կողմերով ավելի բարձր ե, քան ուսւական պրովինցիաները: Նա պարզապես շփոթում է Բագուս Աղքարեղանի հետ: Բագուս զարգացել ե վոչ թե Աղքարեղանի ընդերքից, այլ շինված ե բարձրից, Նորելի, Ռոտշիլդի, Վիշառով և ուրիշների ջանքերով: Ինչ վերաբերում ե բուն Աղքարեղանին, ապա նա ամենահետամնաց նահապետական-ֆեոդալական հարաբերություններ ունեցող մի յերկիր ե: Ուստի յետ Աղքարեղանն ամբողջությամբ վերապրում եմ ծայրամասերի այն խմբին, վորոնք չեն անցել կապիտալիզմը և վորոնց նկատմամբ անհրաժեշտ ե կիրառել յուրահատուկ մեթոդ:

ներ՝ այդ ծայրամասերը խորհրդային տնտեսության հուսնի մեջ ներառնելու համար։ Այդ մասին թեղիսներում ասված է։ Այսու հետեւ կա յերրորդ խոռոչը, զոր ընդգրկում է 8 կամ 10 միլիոնից վոչ ավելի։ դրանք մեծ մասամբ անասնապահ ցեղեր են, ուր ցեղական կենցաղը դեռ ապրում է, և վորոնք դեռևս չեն անցել հողագործական տնտեսության։ Այդ, զիսավորապես, կիրգիզներն են, թուրքեատանի հյուսիսային մասը, բաշկիրները, չեչենները, ուերը, ինգուչները։ Ազգությունների այդ խմբին ամենից առաջ հարկավոր ե ապահովել անձրաժեշտ հողով։ Այստեղ կիրգիզներին ձայն չտվին, վիճաբանությունները դադարեցրին։ Նրանք ավելի շատ բան կասեցին, թե ինչ տանջանքներ ե ապրում լեռնային Բաշկիրիան, կիրգիզիան և լեռնականները, վարոնք առանց հողի մահանում են։ Բայց այն, ինչ այդ առթիվ ասաց Սաֆարովը՝ միայն վերաբերում ե ազգությունների մի խմբին, զոր կազմում ե 8-ից մինչև 10 միլիոն։ Ուստի միտք չունի ընկ. Սաֆարովի գործնական առաջարկները տարածել բոլոր ծայրամասերի վրա, վորովհետեւ փոչուուս ազգությունների մնացած մասի համար—իսկ զրանց թիվը 55 միլիոն ե—այդ ուղղումները վոչ մի նշանակություն չունեն։ Ահա թե ինչու յես, չառարկելով Սաֆարովի մըտցրած առանձին կետերի կռնկրետացման, լրացումների ու բարելավումների դեմ, վորոնք վերաբերում են ազգությունների վորոշիմբերի, պետք ե ասեմ, զոր այդ ուղղումները չի կարելի ընդհանրացնել։ Այնուհետև յես պետք ե նկատողություն անեմ ընկ. Սաֆարովի մի ուղղումի առթիվ։ Նրա ուղղումներից մեկի մեջ սպրուել ե մի ֆրազ «ազգային կուլտուրական ինքնորոշման» մասին։ «Մինչև չոկտեմբերյան հեղափոխությունը,—ասված ե նրա մեջ,—Ռուսաստանի արևելյան ծայրամասերի գաղութային ու կիսագաղութային ժողովուրդները իմալերիալիստական քաղաքականության հետեւանքով գուրել ելին սեփական ազգային կուլտուրական ինքնորոշման, մայրենսի լեզվով կրթվելու միջոցով կապիտալիստական քաղաքականության կուլտուրական նվաճումներին հաղորդակից լինելու վորեւ հնարավորություններից» և այլն։

դապրց լրսուռ զորա առաջ է առ ի համար չեմ կարող
Յես պետք ե ասեմ, վոր այդ ուղղումն ընդունել չեմ կարող,
վորովհետև նրանից բունդիզմի հոտ և փշում: Բունդական ձեւա-
կերպում ե՞ ազգային-կուլտուրական ինքնորոշում: Մենք վաղուց
ենք ձեռք քաշել ինքնորոշման մշտական լոգունքներից: Դրանք
վերականգնել պետք չե: Ըստ վորում նրա թեղիսների ամբողջ հա-

մապատասխան ֆրազը կազմում ե բառերի ամենաանբնական գույքում:

Այստեղ յես ստացել եմ մի տոմսակ, թե իբր մենք, կոմունիստներս բելոռուսական ազգությունը պատվաստում ենք արհեստական կերպով: Այդ սխալ ե, վորովճետե գոյություն ունի բելոռուսական ազգություն, վորն ունի իր լեզուն, վորը տարբերվում ե ուստականից, այդ պատճառով ել բելոռուսական ժողովրդի կուլտուրան բարձրացնել կարելի յե միայն նրա մայրենի լեզվով: Հենց այսպիսի ճառեր եյին լսվում հինգ տարի սրանից առաջ Ուկրաինայի մասին, ուկրաինական ազգության մասին: Իսկ նորերս դեռ խոսում եյին այն մասին, վոր Ուկրաինայի հանրապետությունը և ուկրաինական ազգությունը գերմանացիների հնարած բանն ե: Մինչդեռ պարզ ե, վոր ուկրաինական ազգությունը գոյություն ունի, և նրա կուլտուրայի զարգացումը կազմում ե կոմունիստների պարտականությունը: Զի կարելի պատմության դեմ զնալ: Պարզ ե, վոր յեթե Ուկրաինայի քաղաքներում մինչեւ այժմ դեռ գերիշխում են ուստական տարրեր, ապա ժամանակի ընթացքում այդ քաղաքներն անխուսափելիորեն կուկրաինացվեն: 40 տարի առաջ Ռիգան գերմանական քաղաք եր, բայց վորովճետե քաղաքներն աճում են գյուղերի հաշվին, իսկ գյուղը ազգության պահպանիչն ե, ապա այժմ Ռիգան գուտ լատիշական քաղաք ե: 50 տարի առաջ Հունգարիայի բոլոր քաղաքները գերմանական բնույթ ունեյին, այժմ նրանք մաշարացված են: Նույնը կլինի նաև Բելոռուսիայի հետ, վորի քաղաքներում դեռևս գերակշռում են վոչ-բելոռուսները:

Վերջացնելով յեզրափակման խոսքս, առաջարկում եմ ընտրել մի հանձնաժողով, վորի մեջ պետք ե մտնեն մարզերի ներկայացուցիչները՝ ավելի կոնկրետացնելու թեզիսների այն կոնկրետ առաջարկները, վորոնք հետաքրքրում են մեր բոլոր ծայրագավառներին: (Մաքարություններ):

ԴԿ(Բ)Կ 10-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

ԿԱՊԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ

1. Ժամանակակից ազգերն արդյունք են վորոշակի դարաշըրջանի՝ բարձրացող կապիտալիզմի դարաշըրջանի: Ֆեոդալիզմի վերացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ հանդիսանում է մարդկանցից ազգություններ կազմելու պրոցես: Անգլիացիները, ֆրանսացիները, գերմանացիները, իտալացիները ազգ են կազմել ֆեոդալական ցրվածության նկատմամբ հաղթանակած կապիտալիզմի հաղթական զարգացման միջոցին:

2. Այստեղ, վորտեղ ազգերի գոյացումը ժամանակի տեսակետից ընդհանուր առմամբ և ամբողջապես համընկնում եր կենտրոնացած պետությունների առաջացման հետ, ազգերը ընականաբար պետական կերպարանք ստացան, զարգացան և դարձան ինքնուրույն բուրժուական ազգային պետություններ: Այսպես տեղի ունեցավ Անգլիայում (առանց Իռլանդիայի), Ֆրանսիայում, Իտալիայում: Ցեղոպայի արևելքում, ընդհակառակը, կենտրոնացած պետությունների առաջացումը, վոր արագացված եր ինքնապաշտպանության պահանջներից զրգված (թուրքերի, մոնղոլների արշավանքը և այլն), տեղի ունեցավ ֆեոդալիզմի վերացումը առաջ, ասել ե՝ ազգերի գոյացումըց առաջ: Մը հետևանքով ազգերն այստեղ չեյին կարող և չկարողացան ազգային պետություններ կազմել, այլ ստեղծեցին միքանի բուրժուական խառը, բազմազգի պետություններ՝ կազմված մեկ ուժեղ, գերիշխող ագից և միքանի թույլ, հպատակ ազգերից: Այդպես են Ավստրիան, Հունգարիան, Ռուսաստանը:



3. Աղջային այնպիսի պետություններ, ինչպես ֆրանսիան և իտալիան, վորոնք առաջին շրջանում հենվում եյին գլխավորապես իրենց սեփական ազգային ուժերի վրա, ընդհանրապես ասած, ազգային ճնշում չգիտեյին: Իբրև հակադրություն դրան, բազմազգի պետությունները, վոր կառուցված են մեկ ազգի—ավելի ճիշտ՝ նրա գերիշխող դասակարգի—տիրապետության հիման վրա մնացած ազգերի նկատմամբ՝ հանդիսանում են ազգային ճնշման ու ազգային շարժումների սկզբնական հայրենիքն ու հիմնական ասպարեզը: Գերիշխող և հապատակ ազգերի շահերի հակասություններն այն հակասություններից են, առանց վորոնց լուծման բազմազգի պետությունը կայուն գոյություն ունենալ չի կարող: Բուրժուական բազմազգի պետության վորբերգությունն այն է, վոր նրա ուժերից վեր և լուծել այդ հակասությունները, վոր նրա յուրաքանչյուր փորձը՝ «հավասարեցնելու» ազգերը և «սպահտանելու» ազգային փորբամանություններին՝ մասնավոր սեփականատիրության և դասակարգային անհավասարության պահպանման պայմաններում՝ սովորաբար վերջանում ենոր անհաջողությամբ, ազգային ընդհարումների նոր լարումով:

4. Կապիտալիզմի հետագա աճումը Յեվրոպայում, նոր շուկաների պահանջը, հումքի ու գառելիքի վորոնումը, վերջապես, իմպերիալիզմի զարգացումը, կապիտալի արտահանումը և ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների ապահովման անհրաժշտությունը մի կողմից հանգեցին նրան, վոր ազգային հին պետությունները գրավեցին նոր տերիտորիաներ և դարձան բազմազգի (գաղութային) պետություններ իրենց հատուկ ազգային ճնշումով ու ազգային ընդհարումներով (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա), մյուս կողմից՝ հին բազմազգի պետությունների գերիշխող ազգերի մեջ ուժեղացրին մի ձգում վոչ միայն պահպանելու պետական հին սահմանները, այլ և ընդարձակելու վերջիններս, իրենց յենթարկելու նոր (թույլ) ազգություններ հարեան պետությունների հաշվին: Դրանով իսկ ազգային հարցն ընդարձակեց և, վերջիվերջո, հենց իրերի ընթացքով ձուլվեց գաղութների ընդհանուր հարցին, իսկ ազգային ճնշումը ներպետական հարցից դարձավ միջպետական հարց, իմպերիալիստական «մեծ» պետությունների պայքարի (և պատերազմի) հարց՝ թույլ, վոչ-իրավագոր ազգությունների հպատակեցման համար:

5. Իմպերիալիստական պատերազմը, վոր մինչև արմատները հայտաբերեց բուրժուական բազմազգի պետությունների ազգային անհաշտելի հակասություններն ու ներքին սնանկությունը, գաղութային հաղթած պետությունների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) ներսում ծայրահեղ չափերով սրեց ազգային կոնֆլիկտները, կատարելապես քայլքայեց հաղթված բազմազգի պետություններին (Ավստրիա, Հռունգարիա, Ռուսաստան 1917 թ.) և, վերջապես, իբրև ազգային հարցի առավել «արմատական» լուծում բուրժուազիայի կողմից, — առաջացրեց բուրժուական նոր ազգային պետություններ (Լեհաստան, Զեխո-Սլովակիա, Հարավ-Սլավիա, Ֆինլանդիա, Վրաստան, Հայաստան և այլն): Սակայն ազգային նոր, ինքնուրույն պետությունների առաջացումը ազգությունների խաղաղ համակեցություն հնաստատեց և չեր կարող հաստատել, վոչ ազգային անհավասարությունը, վոչ ել ազգային ճնշումը չվերացրեց և չեր կարող վերացնել, վորովհետեւ մասնավոր սեփականատիրության ու դասակարգային անհավասարության վրա խարսխված ազգային նոր պետությունները չեն կարող գոյություն ունենալ՝ ա) առանց ճնշելու իրենց ազգային փոքրամասնություններին (Լեհաստանը ճնշում և բերության հարյաներին, լիտվայիններին, ուկրաինացիներին, Վրաստանը ճընշում և սուերին, աբխազներին, հայերին, Հարավ-Սլավիան ճընշում և սուլայիններին, բոսնիացիներին և այլն), բ) առանց իր տեսքառիրիան ի հաշիվ հարեանների ընդհարձակելու, վորպիսի հանգամանքը առաջացնում և կոնֆլիկտներ ու պատերազմներ (Լեհաստանն ընդդեմ լիտվայի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Հարավ-Սլավիան ընդդեմ Բուլղարիայի, Վրաստանն ընդդեմ Հայաստանի, Թյուրքիայի և այլն), գ) առանց Փինանսական, տնտեսական և ուղղմական տեսակետից իմպերիալիստական «մեծ» պետություններին յենթարկվելու:

6. Այսպիսով, հետապտերազմյան շրջանը բացում և քաղաքակրթված յերկրների ազգերի կողմից ազգային թշնամանքի, անհավասարության, ճնշման, կոնֆլիկտների, պատերազմների, իմպերիալիստական վայրագությունների անմիտիթարական պատկերի հնչպես միմյանց, այնպես ել վոչ-իրավագոր ժողովուրդների հանդեպ. — մի կողմից միքանի «մեծ» պետություններ, վորոնք ճընշում ու շահագործում են ազգային կախյալ ու «անկախ» (փաստորեն միանգամայն կախյալ) բոլոր պետություններին, և այդ

պետությունների փոխադարձ պայքարը ազգային պետությունների շահագործումը մոնոպոլիայի յենթարկելու համար, մյուս կողմից՝ կախյալ և անկախ ազգային պետությունների պայքարը ընդդեմ «մեծ» պետությունների անտանելի ճնշումին. ազգային պետությունների փոխադարձ պայքարը կը ազգային տերիտորիան ընդարձակելու համար. յուրաքանչյուր առանձին ազգային պետության պայքարը ընդդեմ իր ճնշված ազգային փոքրամասնությունների. վերջապես, գաղութների ազատագրման շարժման ուժեղացումը ընդդեմ «մեծ» պետությունների և ազգային կոնֆլիկտների սրում ինչպես այդ պետությունների ներսում, այնպես ել ազգային պետությունների ներսում, վորոնք, սովորաբար, իրենց կազմի մեջ ունեն մի շարք ազգային փոքրամասնություններ։ Այս և «աշխարհի պատկերը», վոր ժառանգություն և թողել իմ պերիալիստական պատերազմը։

Բուրժուական հասարակությունը կատարելապես սնանկ դուրս յեկավ ազգային հարցի լուծման մեջ։

2

ԽՈՐՀԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ ՅԵՎ

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Յեթե մասնավոր սեփականությունն ու կապիտալը անխուսափելիորեն անջատում են մարդկանց, բորբոքում են ազգային թշնամանքը և ուժեղացնում ազգային ճնշումը, ապա կոլեկտիվ սեփականությունն ու աշխատանքը նույնքան անխուսափելիորեն մերձեցնում են մարդկանց, խախտում են ազգային թշնամանքը և վոչնչացնում ազգային ճնշումը։ Կապիտալիզմի գոյությունն առանց ազգային ճնշման նույնքան անհեթեթությունն ե, վորքան անհեթեթություն և սոցիալիզմի գոյությունն առանց ճնշված ազգերի ազատազրության, առանց ազգային ազատազրության։ Շովինիզմն ու ազգային պայքարը անխուսափելի, անդիմադրելի յեն, քանի դեռ գյուղացիությունը (և ընդհանրապես մանր բուրժուազիան առաջին հեթին գերիշող ազգերից)՝ լի ազգայնական նախապաշարմունքներով, գնում և բուրժուազիայի

հետեւց, և, ընդհակառակը, ազգային խաղաղությունն ու ազգային ազատությունը ապահովված կարելի յե համարել, յեթե գյուղացիությունը գնում և պրոլետարիատի հետեւց, այսինքն՝ յեթե ապահովված և պրոլետարիատի դիկտատուրան։ Ռւսական թորհությունների հաղթանակը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը ազգային ճնշումը վերացնելու, ազգային հավասարություն հաստատելու, ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովելու հիմնական պայմանն են։

2. Թորհրդային հեղափոխության փորձն ամրողությամբ հաստատում և այս դրությունը։ Խորհրդային հասարակակարգի հաստատումը միուսաստանում և ազգերի պետական անջատման իրավունքի հոչակտումը շուրջ տվյալին միուսաստանի ազգությունների աշխատավոր մասսաների հարաբերությունները, խախտեցին ազգային հին թշնամանքը, հիմքից զրկեցին ազգային ճնշումը և հոգուած սուր բանվորների նվաճեցին վոչ միայն միուսաստանի, այլ և Ցելյուսավայի ու Ասիայի նրանց ազգային յեղբայրների վստահությունը, այդ վստահությունը հասցըին մինչեւ խանդավառության, մինչև ընդհանուր գործի համար պայքարելու պատշաճության, և ազգային ընդհանուր մասսաների «գարավոր» թշնամանքը։ Միևնույնը պետք է ասել Խորհրդային հանրապետությունների ժամանակականությունը, Հայաստանում հանդեցին նույն հետեւանքներին՝ վերացնելով ազգային ընդհարումները և լուծելով թյուրքու հայ, հայ և ազգային աշխատավոր մասսաների «գարավոր» թշնամանքը։ Միևնույնը պետք է ասել Խորհրդային հանդեցին նույն հետեւանքներին վերաբերյալ Հունգարիայում, Բավարիայում, Ֆինլանդիայում, Լատվիայում կողմից՝ վստահորեն կարելի յե ասել, վոր ուսւ բանվորները չեյին կարող հաղթել Կուչակին և Դենիկինին, իսկ Ադրբեյջանի և Հայաստանի հանրապետությունները չեյին կարող վստափ կանգնել առանց ազգային թշնամանքն ու ազգային ճնշումն իրենց տան մեջ վերացնելու, առանց նրանց հանդեպ Արևմուտքի և Արևելքի ազգությունների աշխատավոր մասսաների վստահության և խանդավառության։ Խորհրդային հանրապետությունների ամրապնդումը և ազգային ճնշման վերացումը իմպերիալիստական ստրկությունից աշխատավորների ազատազրման միևնույն պրոցեսի յերկու կողմերն են։

3. Սակայն խորհրդային, թեկուզ և իրենց մեծությամբ ամենանշանական, հանրապետությունների գոյությունը մահացու սպառնալիք և իմպերիալիզմին։ Այս սպառնալիքը միմյայն այն չե-

վոր խորհրդային հանրապետությունները, կտրվելով իմալերիաւ-
լիզմից՝ գաղութներից ու կիսազաղութներից դարձան խակական
ինքնուրույն պետություններ և դրանով խսկ իմալերիալիստներին
զրկեցին մի ավելորդ տերիտորիայից ու ավելորդ յեկամուտնե-
րից, այլ ամենից առաջ այն, վոր խորհրդային հանրապետու-
թյունների բուն խսկ գոյությունը, այս հանրապետությունների
ամեն մի քայլը բուրժուազիային ճնշելու և պրոլետարիատի
դիկտատուրան ամրապնդելու ուղղությամբ մեծագույն ազիտա-
ցիա յե ընդդեմ կապիտալիզմի ու իմալերիալիզմի, ազիտացիա՝
հոգուտ կախյալ յերկրների ազատազրման իմալերիալիստական
ստրկությունից, կապիտալիզմի բոլոր տեսակների քայլացման ու
կազմալուծման անհաղթահարելի ֆակտոր։ Այստեղից բղխում և
իմալերիալիստական «մեծ» պետությունների պայքարելու ան-
խուսափելիությունը խորհրդային հանրապետությունների դեմ,
«մեծ» պետությունների ձգտումը վոչչացնելու այս հանրապե-
տությունները։ «Մեծ» պետությունների պայքարել պատմու-
թյունը Խորհրդային Ռուսաստանի գեմ, վորոնք նրա գեմ վոտքի
յեն հանում ծայրամասերի բուրժուական պետություններին մեկը
մյուսի հետեւից, հականեղափախական գեներալների մի խմբակը
մյուսի հետեւից, վորոնք խնամքով ողակում են Խորհրդային
Ռուսաստանին և ընդհանրապես ձգտում մեկուսացնել նրան տըն-
տեսապես, — պիրճախոս կերպով վկայում ե, վոր միջազգային
տվյալ հարաբերությունների պահին, կապիտալիստական ո-
ղակման պայմաններում խորհրդային վոչ մի հանրապետություն,
առանձին վերցրած, ապահով չի կարող համարել իրեն համաշ-
խարհային իմալերիալիզմի գործադրած անտեսական հյուծումից
ու ուղմական ջարդից։

4. Այս պատճառով խորհրդային առանձին հանրապետու-
թյունների մեկուսի գոյությունն անկայուն է, անհաստատ՝ նկա-
տի ունենալով կապիտալիստական պետությունների սպառ-
նալիքները նրանց գոյության։ Խորհրդային հանրապետու-
թյունների ինքնապաշտպանության ընդհանուր շահերը՝ մի
կողմից, պատերազմից քայլացմած արտադրողական ուժերի վե-
րականգնումը՝ մյուս կողմից և խորհրդային հացառաս հանրա-
պետությունների պարենային անհրաժեշտ ողնությունը վոչ-
հացառաս հանրապետություններին յերրորդ կողմից, — հրամա-
յաբար թելաղբում են կնքել խորհրդային ախանձին հանրապե-

տությունների պետական միություն, իբրև իմալերիալիստական
ստրկությունից ու ազգային ճնշումից փեղկելու միակ միջոց։
«Իրենց» և «ռոտար» բուրժուազիայից ազատազրմած խորհրդային
ազգային հանրապետությունները կարող են պաշտպանել իրենց
գոյությունը և հաղթել իմալերիալիզմի միացյալ ուժերին միմիացն
համախմբվելով պետական սերտ միության մեջ, կամ նրանք ա-
մեննին չեն հաղթի։

5. Ռազմական ու տնտեսական գործի բնադրության վրա
հենված խորհրդային հանրապետությունների ֆեղերացիան պե-
տական միության այն ընդհանուր ձեն ե, վոր հանրավորությունն
ե տալիս՝ ա) ապահովել ինչպես առանձին հանրապետություննե-
րի, այնպես ել ամբողջ ֆեղերացիայի ամբողջությունն ու արև-
ական զարգացումը. բ) ընդդրկել զարգացման տարրեր աս-
տիճանների վրա կանգնած զանազան ազգերի ու ժողովուրդնե-
րի կենցաղի, կուլտուրայի ու տնտեսական կացություն ամբողջ
բազմազանությունը և դրա համապատասխան կիրարկել ֆեղե-
րացիայի այս կամ այն ձեւը. գ) կարգավորել իրենց բախտն այս
կամ այն կերպ ֆեղերացիայի բախտի հետ կապած ազգերի ու
ժողովուրդների խաղաղ համակեցությունն ու յեղբայրական գոր-
ծակցությունը։ Ռուսաստանի փորձը՝ ֆեղերացիայի զանազան
տեսակներ կիրառելը խորհրդային ավտոնոմիայի վրա հենված
ֆեղերացիայից (Կիրգիզիա, Բաշկիրիա, Թունական-
ներ, Դաղստան) պայմանագրային հարաբերությունների վրա
հենված խորհրդային անկախ հանրապետությունների ֆեղերա-
ցիայի անցնելը (Ուկրաինա, Ադրբեյջան) և միջանկյալ աստիճան-
ցիայի անցնելը (Թուրքիաստան, Բելուստիա), — ամ-
ենք թույլ տալը նրանց միջև (Թուրքիաստան ֆեղերացիայի, իբրև խորհրդային հան-
րողությամբ հաստատեց ֆեղերացիայի, իբրև խորհրդային հան-
րապետությունների պետական միության ընդհանուր ձեւի վողջ
նալատականարմարությունն ու ճկունությունը։

6. Բայց ֆեղերացիան կայուն կարող ել լինել, իսկ ֆեղե-
րացիայի արդյունքները՝ իրական միմիացն այն դեպքում,
յերբ նա հենվում է նրա մեջ մանող յերկըների փոխա-
յերը և կամակոր համաձայնության վրա։ Յեթե
դարձ վստահության և կամակոր համաձայնության վրա։ Յեթե
ՌՍՖՖՀ միակ յերկին և աշխարհում, վրատեղ հաջողվել և մի
ամբողջ շարք ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցու-
թյան ու յեղբայրական գործակցության փորձը, ապա այն պատ-
ճառով, վոր այնտեղ չկան վոչ գերիշողներ, վոչ հպատակներ,

պոչ մետրոպոլիտա, վոչ գաղութներ, վոչ իմպերիալիզմ, վոչ ել ազգային ճնշում, — այնտեղ ֆեդերացիան խարսխված և զանազան ազգերի աշխատավոր մասսաների փոխադարձ վատահության ու միանալու կամավոր ձգտման վրա: Ֆեդերացիայի այս կամավոր բնույթը պարտադիր կերպով պետք ե պահպանի նաև առաջիկայում, վորովճետև միմիայն այդպիսի ֆեդերացիան կարող և անցումային ձև դառնալ դեպի բոլոր յերկրների այն բարձրագույն միասնությունը համաշխարհային միասնական տնտեսության մեջ, վորի անհրաժեշտությունն ավելի ու ավելի պարտադիր և դառնում:

3

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Վորչափով պրոլետարական հեղափախությունն իմպերիալիստական բազմազգի պետության փոխարեն զնում և խորհրդային ազգային հանրապետությունների ազատ ֆեդերացիան, խորհրդային համարակակարգն ապահովում և առաջներում ճնշված ազգությունների աշխատավորների աստիճանական ու անհիվանդագին զարգացումը դեպի կոմունիզմ և ազգային ճնշման ու անհավասարության և սեփական շահագործող վերնախավերի մասորդների դեմ պայքարելիս նրանց հնարավորություն և տալիս հենվելու առաջավոր յերկրների պրոլետարիատի հեղափոխական փորձի ու կազմակերպված ուժի վրա:

ՌՍՖՌՀ և նրա հետ կապված խորհրդային անկախ հանրապետություններն ունեն մոտ 140 միլիոն ազգաբնակչություն: Նրանցից վելիկոուս չեն մոտ 65 միլիոն (ուկրաինացիներ, բելուստաներ, կիրգիզներ, ուզբեկներ, թուրքմեններ, տաջիկներ, աղըրքանցիներ, Մերձվոլգյան թաթարներ, Ղրիմի թաթարներ, բուխարացիներ, խիլացիներ, բաշկիրներ, հայեր, չեչեններ, կարաղիններ, ոսկը, չերկասներ, ինգուչեններ, կարաչայիններ,

բաւկարներ *), կալմիկներ, կարելներ, ավարներ, դարզինցիներ, կազիկումսւխցիներ, կյուրինցիներ, կումիկներ **), մարիներ, չուվաշներ, վոտյակներ, Մերձվոլգյան գերմանացիներ, բուրյաթներ, յակուտներ և այլն): Ցարիկմի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այդ ժողովուրդների հանդեպ այն եր՝ սպանել նրանց մեջ վորեեպետականության սաղմեր, անդամալուծել նրանց կուլտուրան, կաշկանդել լեզուն, պահել նրանց տղիսության մեջ և, վերջապես, ըստ հնարավորության ոռւսացնել նրանց: Նման քաղաքականության հետևանքներն են՝ այդ ժողովուրդների անզարգացածությունն ու քաղաքական հետամնացությունը:

Այժմ, յերբ կալվածատերերն ու բուրժուազիան տապալված են, և ժողովրդական մասսաները Խորհրդային իշխանություն են հոչակել նաև այդ յերկրներում, կուսակցության խնդիրն ե՝ ոգնել վոչ-վելիկոուս ժողովուրդների աշխատավոր մասսաներին հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին, ոգնել նրանց ա) իրենց մոտ զարգացնելու և ամրացնելու խորհրդային պետականությունն այն ձևերով, վորոնք համապատասխանեն այդ ժողովուրդների ազգային-կենցաղային պայմաններին. բ) իրենց մոտ զարգացնելու և ամրացնելու մայրենի լեզվով գործող դատարան, աղմինիստրացիա, տնտեսության որդաններ, իշխանության որդաններ՝ կազմված տեղական բնակչության կենցաղն ու հոգեբանությունն իմացող տեղական մարդկանցից. գ) իրենց մոտ զարգացնելու մամուլը, դպրոցը, թատրոնը, ակումբային գործը և ընդհանրապես կուլտուր-լուսավորական հաստատությունները՝ մայրենի լեզվով. դ) դնելու և զարգացնելու ինչպես ընդհանուր կրթական, այնպես և արհեստական-տեխնիկական բնույթի դասընթացների ու դպրոցների լայն ցանց՝ մայրենի լեզվով (առաջին հերթին կիրգիզների, բաշկիրների, թուրքմենների, ուզբեկների, տաջիկների, աղըրքանցիների, թաթարների, գաղատանցիների համար), վորպեսի արագ թափով պատրաստվեն վորակյալ բանվորների և խորհրդային-կուսակցական,

*) Վերջին յոթ ժողովուրդները միավորվում են «Լեռնականներ» խմբի մեջ:

**) Վերջին հինգ ժողովուրդները միավորվում են «Դաղըրտանցիներ» խմբի մեջ:

աշխատողների բնիկ կադրեր կառավարման բոլոր ասպարեզներում և ամենից առաջ լուսավորության ասպարեզում:

2. Յեթե 65 միլիոն վոչվելիկուուր բնակիչներից հանենք Ուկրաինան, Բելոռուսիան, Աղրբեջանի մի մասը, Հայաստանը, վորանք այս կամ այն չափով անցել են արդյունաբերական կապիտալիզմի շրջանը, ապա կմա մոտ 30 միլիոն գերազանցապես թուրք բնակչություն (Թուրքեստան, Աղրբեջանի մեծ մասը, Դաղստան, Լեռնականները, Թաթարները, բաշկիրները, կիրգիզները և այլն), վորոնք չեն կարողացել անցնել կապիտալիստական զարգացումը, չունեն կամ համարյա չունեն իրենց արդյունաբերական պրոլետարիատը, մեծ մասամբ պահպանել են անասնապահական տընտեսությունն ու նահավետական ցեղալիք (Կիրգիզիա, Բաշկիրիա, Հյուսիսային Կովկաս) կամ դեռևս լրիվ չափով չեն հեռացել կիսանահապետական-կիսաֆեոդալական կենցաղից (Աղրբեջան, Ղրիմ և այլն), սակայն արդեն ներգրավված են խորհրդային զարգացման ընդհանուր հունի մեջ:

Ազգային փաստական անհավասարության վերացումն այստեղ հանդիսանում ե տեսական պրօցես, վոր պահանջում ե հաստատու համառ պայքար ընդդեմ ազգային ճնշման ու դադութային ստրկության բոլոր մնացորդների: Ազգային անհավասարությունն այստեղ մինչև այժմ խարսխված եր պատմականորեն դասավորված տնտեսական անհավասարության վրա: Այս անհավասարությունն ամենից առաջ արդարացվում եր նրանով, վոր գաղութների կամ կիսապաղութների գրություն ունեցող Ռուսաստանի այդ ծայրագալաները (առանձնապես Թուրքեստանը) բռնի կերպով պահպանվում եին ամեն տեսակ հումք մատակարարողի դերում, վորը մշակվում եր կենտրոնում: Այս հանգամանքն եր նրանց մշտական հետամնացության պատճառը և խանգարում եր արդյունաբերական պրոլետարիատի առաջացմանը և մանավանդ զարգացմանը այդ ճնշված ժողովուրդների մեջ: Այս ամենի հետ անխուսափելիորեն պետք ե ընդհարվեր պրոլետարական հեղափոխությունը արևելյան ծայրագալանից յունի առաջացմանը և մասնավանդ պահպանական պահպանական առաջարկությունը բոլոր մնացորդների հումքի մոտ փոխադրելու միջոցով (Թուրքիաները հումքի աղբյուրների մոտ փոխադրելու միջոցով) (Թուր-

քեստան, Բաշկիրիա, Կիրգիզիա, Կովկաս—անքստիլ լրողի, կաշվերդյունաբերություն և այլն):

Ազգային անհավասարության բոլոր տեսակների դեմ մղած իր վճռական ու հետևողական պայքարով նվաճելով արևելյան ծայրագալաների աշխատավորական մասսաների վստահությունը, կուսակցությունը միաժամանակ համախմբում ու միավորում և նրանց՝ նահապետական-փեոդալական հարաբերությունները հենց առաջներում ճնշված աղքերի միջից վերջնականապես վերացնելու և նրանց կոմունիստական շինարարությանը հաղորդակից անելու համար: Արևելյան ծայրագավառներում դասակարգային շերտավորման առաջին քայլը պիտի լինի բոլոր տեղական շահագործող տարրերի մեկուսացումը մասսաների վրա աղեցություն ունենալուց, պայքարը նրանց գեմի խորհրդային ինքնավարության բոլոր որդաններում, նրանց գրկումը դասակարգային արտօնություններից՝ տեղական մասսաների ինքնակազմակերպման միջոցով աշխատավորական խորհուրդների մեջ: Ընդ վորում առաջին հերթին պետք ե կազմակերպվեն և ամենահոգածար կերպով կոմունիստական կուսակցության շարքերն ու խորհրդային աշխատանքի ներգրավվեն տեղական պրոլետարական համեմատաբար փոքրաթիվ տարրերը, վորոնք աշխատավորմեն զանապան արհեստագործություններում (որօմուսլա), հանքերում, յերկաթուղիներում, աղանքներում, կուլակային տնտեսություններում:

Հաջորդ քայլը պիտի լինի տեղական չքավորության խառը, արհեստակցական և կոռպերատիվ այն տիպի տնտեսական կազմակերպությունը, վոր պայմանավորված լինի հետամնաց տնտեսական ձևերից տեղական աշխատավորության անցումով գեպի ավելի բարձր ձևերը՝ քոչվորական կյանքից գեպի հողագործություն, աղատ շուկայի համար աշխատող համքարային արհեստից գեպի արտելային աշխատանքի Խորհրդային պետության համար (տնախագործ կիսապրոլետարների ներդրավումը արհմիությունների մեջ), տնախագործական արտելային արտադրությունների գեպի ֆաբրիկա-գործարանային արտադրություն, մանր հողագործությունից գեպի հողի պլանային հանրային մշակումը: Խորհրդային կառավարությունը նախ և առաջ պետք ե միասնական սպառողական կոռպերացիայի որդանների ցանցի՝ միջոցով ոգնության հասնի տեղական կիսապրոլետարական մասսաներին, վորոնք քայքայման պատճառով գտնվում են մահացման սպառ-

Նալիքի տակ: Խորհրդային տնտեսության շինարարության այս հատուկ պայմանների համապատասխան պետք է վերակազմվի տնտեսական որգանների աշխատանքը այն իմաստով, վոր ծանրության կենտրոնը փոխադրվի տեղական միջավայրը, տնայնագործական և այլ արհեստագործությունները մտցվեն պլանային տնտեսական կազմակերպության մեջ, ամուր կապ հաստատվի բնակչության հիմնական արտադրական մասսայի հետ և կոնկրետ պլան մշակվի տեղական պայմանների համապատասխան ծայրադաշտական արդյունաբերությունն արմատացնելու համար: Նմանապես վճռական կերպով պետք է կանխել խորհրդային կենտրոնական Ռուսաստանի նմուշներին կուրորեն ընդորինակելը, առանձնապես հացի մոնոպոլիան ծայրագավառներում կիրառելիս, և պարենային քաղաքականության կիրառումը վոչ թե խոսքով, այլ գործով կապակցել տեղական հետամնաց միջավայրի դասակարգային շերտավորման քաղաքականության հետ: Կենտրոնական Ռուսաստանի տնտեսական այն ձեռնարկումների ամեն մի մեխանիկական պատվաստումն արևելյան ծայրագավառներում, պորոնք պիտանի յեն տնտեսական զարգացման միայն ավելի բարձր աստիճանի համար՝ պետք ե մերժել: Միայն տեղական չքաղաքության լայն մասսաներին նրանց տնտեսական կենսական շահերի հիման վրա կազմակերպելով ե, վոր աշխատավորների խորհրդական կարող են Արեկելքի ժողովուրդներին վտաքի հանել միատեղ, մեջք մեջքի տված պայքար մղելու առաջավոր յերկրների պրոխարիտատի հետ միասին:

3. Յեթե 30 միլիոն գերազանցավես թուրք բնակչությունից հաշվենք Աղբեջանը, Թուրքեստանի մեծ մասը, թաթարներին (ՄերձՎոլգյան և Ղրիմի), Բուխարան, Խիվան, Դաղստանը, Եռնականների մի մասը (կարարդիններ, չերկեններ, բալկարցիններ) և միջանի այլ ազգություններ, վորոնք արդեն նստակյաց են դարձել և հաստատ ամրացել են վորոշ տերիտորիայի վրա, ապա կմնան մոտ 10 միլիոն կիրակիններ, բաշկիրներ, չեչեններ, Թուրքեստանի հարավային մասը, ոսերը, ինգուշները, վորոնց հողերը մինչև վերջերս գաղութացման որյեկտ երին ծառայում ուռւա վերաբերեցների համար, վորոնք արդեն նրանցից զրագել են լավագույն վարելահողերը և սիստեմատիկ դուրս են վտարում նրանց անպառը անապատները: Ցարիզմի քաղաքականությունը, կալամածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այն եր,

վոր այդ շրջաններում բնակեցնի ավելի շատ կուլակային տարրեր ուռւա գյուղացիներից ու կազակներից, վերջիններս դարձնելով մեծապետական ձգտումների մի հուսալի հենարան: Այս քաղաքականության հետեւանքն եր յերկրի խորքերը քշվող բնիկների (կիրգիզներ, բաշկիրներ) աստիճանական մահացումը: Այս ժողովուրդների աշխատավորական մասսաների նկատմամբ կուսակցության խնդիրը պիտի լինի (բացի 1 և 2-րդ կետերում հիշված խնդիրներից) միավորել նրանց ջանքերը տեղական ուռւա կուլակությունից, առանձնապես վայրագ-վելիկոուսական կուլակությունից, առանձնապես վայրագ-վելիկոուսական կուլակությունից ազատագրվելու համար մղվող պայքարում, բոլոր ուժերով ու բոլոր միջոցներով ողնել նրանց իրենց ուսերից դեն շպրտելու կուլակ-գաղութարարներին և դրանով նրանց համար ապահովել մարդկային գոյությանն անհրաժեշտ պիտանի հողեր:

4. Բացի վերը հիշատակված ազգերից ու ժողովուրդներից, վորոնք ունեն գանձակարգային վորոշակի կառուցվածք և վորոշակի տերիտորիային վրա գուման ՌՍՖՍՀ սահմաններում, գոյություն ունեն նաև առանձին հոսուն ազգային խմբեր, ազգային փոքրամասնություններ, վորոնք ցըված են այլ ազգության կոմպակտ մեծամասնության մեջ և մեծ մասամբ վորոշակի տերիտորիա չունեն (լատիշներ, եստոններ, լեհեր, հրյաներ և այլն): Ցարիզմի քաղաքականությունն այն եր, վոր վոչչացնի այդ փոքրամասնություններին բոլոր միջոցներով, ընդհուպ մինչև ջարդերի միջոցով (հրեյական ջարդեր):

Այժմ, յերբ ազգային արտօնությունները կենսապորձված ե, իսկ ազգագությունների հավասարությունը ազգային ազատ զարգացման իրավունքն ապահովված ե հենց խորհրդային հասարակակարգի բունք իսկ բնույթով, կուսակցության խնդիրն այդ ազգային խմբերի աշխատավորական մասսաների նկատմամբ այն ե, վոր ողնի նրանց լրիվ ողտագործելու իրենց վերապահնված ազատ զարգացման իրավունքը:

5. Կոմունիստական կազմակերպությունների զարգացումը ծայրամասերում ընթանում և վորոշ յուրատեսակ պայմաններում, վորոնք արգելակում են կուսակցության նորմալաձումն այդ շըրջաններում: Մի կողմից ծայրամասերում աշխատող վելիկոուսականությունը, կալամածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այն եր,

թյան պայմաններում և ազգային ճնշման հետ ծանոթ չեն, հաճախ նվազեցնում են ազգային առանձնահատկությունների նշանակությունը կուսակցական և խորհրդային աշխատանքում, կամ բնավ հաշվի չեն նստում նրանց հետ, իրենց աշխատանքում հաշվի չեն առնում տվյալ ազգության դասակարգային կառուցման, կուտարայի, կենցաղի, պատմական անցյալի առանձնահատկությունները, այսպիսով գոեհկացնելով ու աղավաղելով կուսակցության քաղաքականությունն ազգային հարցում: Այս հանգամանքը տանում ե դեպի թեքում կոմունիզմից մեծապետականության, գաղութարարության, վելիկուսական շովինիզմի կողմը: Մյուս կողմից՝ բնիկ-կոմունիստները, վոր ապրել են աղքային ճնշման ծանր շրջանը և դեռ ամբողջովին չեն աղաւալել վերջինիս ուրիշականից՝ հաճախ չափազանցում են ազգային առանձնահատկությունների նշանակությունը կուսակցական ու խորհրդային աշխատանքում, ստվերի մեջ թողնելով աշխատավորության դասակարգային շահերը, կամ տվյալ ազգի աշխատավորության շահերն ուղղակի խանում են նույն ազգի այսպիս կոչված «համազգային» շահերի հետ, չկարողանալով առաջինները ջոկել վերջիններից և նրանց վրա կառուցել կուսակցական աշխատանքը: Այս հանգամանքն իր հերթին տանում ե դեպի թեքում կոմունիզմից բուրժուական դեմոկրատական նացիոնալիզմի կողմը, վոր յերեմն ընդունում ե պանխալամիզմի, պանթյուրքիզմի (Արեւելքում) ձև:

Կոմունիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքների այս յերկու վնասակար թեքումներն ել ուժ են քաղում ծայրամասերի կոմունիստական կազմակերպությունների առաջին շրջանում անխուսափելի խճողվածությունից: Մի կողմից՝ կուսակցությանը կալչում են կուլակային-զաղութարար տարրեր, մյուս կողմից՝ կուսակցության մեջ են նցկվում տեղական շահագործող խմբերի ներկայացնեցիչներ:

Համագումարը վճռապես դատապարտելով այս յերկու թեքումներն ել՝ իրեն վնասավոր ու վտանգավոր թեքումներ կամունիզմի գործի համար, հարկավոր և համարում նշել դեպի մեծապետականություն, գաղութարարություն կատարվող առաջին թեքման առանձին վտանգն ու առանձին վնասը: Համագումարը հիշեցնում ե, վոր առանց գաղութարարական և աղքայնական մացրդները կուսակցության շարքերում հաղթահարելու, ծայ-

րամասերում անկարելի յե ստեղծել ամուր, մասսաների հետ կապված իրոք կոմունիստական կազմակերպություններ, վորոնք իւրենց շարքերում համախմբեն տեղական և ոռու բնակչության պրոլետարական ու կիսապրոլետարական տարրերին ինտերնացիոնիզմի հիման վրա: Ուստի համագումարը գտնում ե, վոր աղքայնական և, առաջին հերթին՝ գաղութարարական տատանումների վերացումը կոմունիզմի մեջ՝ կուսակցության կարևորագույն ինդիքտից մեկն ե ծայրամասերում:

Հրավիրելով վճռական պայքար մղել պրոլետարիատի կուսակցությանը կպած ամեն տեսակ կեղծ-կոմունիստական տարրերի դեմ, համագումարը նախազգուշացնում ե կուսակցությանը քաղենիշաղգայնական և կուլակային տարրերի հաշվին «ընդպարճակիւլուց»: Դրա հետ միասին համագումարն ընդգծում ե, վոր անհրաժեշտ ե արևելյան ծայրամասերի խորհրդային աշխատանքում կարող և կազմակերպված ձևով ոգտագործել առաջնետանքում կարող և կազմակերպված ծողովուրդների աղքային ինտելիզենցիայի այն բում ճնշված ժողովուրդների աղքային ինտելիզենցիայի այն աղնիվ տարրերին, վորոնք ապացուցել են իրենց նվիրվածությունը Խորհրդային իշխանության:



Հնկ. Ստալինի „Կուսակցության ենթական ինդիքներն ազգային հարցում՝
գրաւյնը Կուսակցության ազգային առաջին արտադրանքն է, զոր շարվել և 1933 թվի
հունիսի 14-ին յեզ սպազրվել հունիսի 16-ին:

Կուսակցության կուսակցության գ. ՊԱՐԻՍ

Տպարանի դիրեկտոր Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Յակոն Վ. ՄԵՍԱՑՅԱՆ

Գրաւագներ Ս. ԲԱՐԱՅԵՎԱՆ, Վ. ՄԵԼԻՔԻՆՅԱՆ, Գ. ՆԵՐՍԻՆՅԱՆ,

Խ. ՆԱԴԻՐՈՎՅԱՆ, Գ. ՓԱՐԱՅԱՆ

Տպագրիչներ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Վ. ՍԱՐԳԻՆՅԱՆ,

Գ. ՔԱՐԹՈՎՅԱՆ, Գ. ՆԱԳԻԱՆՅԱՆ

Կազմականներ Մ. ՄԱՐՏԻՆՅԱՆ, Վ. ՄԻԼԻՄԱՆՅԱՆ

Քարգմ. Մ. Զամարյան.

Հայ. քարգմ. խմբ. Գ. Պարիս.

Մրգագրչ. Ա. Տ. Մկրտչյան

Համա. № 114, Տիրամ 3000, Գլամիլս № 7743 (Բ)

Կուսակցության գաղտնաբառ, Գաղտնաբառ № 1, 73,000 ամ. 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0181833

317

ԳՐԱՅԻ 35 ԿՈՂ.



И. СТАЛИН

Об очередных задачах партии
в национальном вопросе

Партиздан 1933 Эривань